Ազդարարության Trumpet's Sound փող

56-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԿ
ՄԱՅԻՍ - ՀՈՒՆԻՍ 2025

Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույումճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հագնվե՛ք. . . . . Հովիվ՝ Հրաչ Գույումճյան

Քրիստոնյաները և հարմարվողականությունը . . . . . Ռեքս Տիրլավ

Ի՞նչ նշանակություն ունի հարությունն
ինձ համար (2) . . . . . Դոն Սթորմր

Նա սովորեցրեց նրանց (3) . . . . . Նեյլ Բուքման

Արտասովոր ամուսնություն . . . . . Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

Լուրեր Վրաստանից . . . . . Դոկտ.՝ Դանիել Ջեյմս

Հագնվե՛ք

Արդիկ իրենց եկամտի զգալի մասը ծախսում են հագուստի վրա: Նորաձևությունը դարձել է կարևոր, հատկապես ապրանքանիշերի անունները: Հարցն այն է, թե արդյո՞ք Երկնքում հագուստ կլինի, և ի՞նչ ապրանքանիշեր ենք հագնելու:

Այնտեղ լինելու է ընդամենը վեց ապրանքանիշ՝ գութը, ողորմությունը, քաղցրությունը, խոնարհությունը, հեզությունը, համբերատարությունը և սերը:

«Ուստի որպես Աստծո ընտրյալներ, սուրբ և սիրելի, ձեր վրա հագեք գութը, ողորմությունը, քաղցրությունը, խոնարհությունը, հեզությունը, համբերատարությունը» (Կող. 3:12):

Մեզանից ոմանք առանց հագուստի կմնան, և որքա՜ն նվաստացուցիչ կլինի դա, սակայն Աստված ուզում է տեսնել մեզ հագած...

Գութը. Հիսուսը պատմեց Բարի սամարացու առակը (Ղուկ. 10:25-37), որտեղ սամարացին օգնեց վիրավոր մարդուն, երբ ուրիշներն անտարբեր անցան նրա կողքով: Սա ցույց է տալիս, որ կարեկցանքը գերազանցում է սոցիալական և մշակութային սահմանները:

Ողորմությունը. Դավիթը Հովնաթանի որդու՝ Սավուղ թագավորի թոռան հանդեպ բարություն ցուցաբերեց, թեև նա՝ Մեմփիբոսթեն, հաշմանդամ էր, գտնվելու վայրն էլ հայտնի չէր, սակայն Դավիթը փնտրեց նրան և վերականգնեց ընտանիքի հողերը՝ ապահովելով նրա ֆինանսական անվտանգությունը: Նա հրավիրեց Մեմփիբոսթեին՝ ճաշելու իր հետ՝ վերաբերվելով նրան որպես իր որդիներից մեկի: Այս բարության գործողությունը հիմնված էր Հովնաթանի հետ Դավթի ունեցած ուխտի վրա և ցույց էր տալիս նրա նվիրվածությունն ու կարեկցանքը:

Խոնարհությունը. Հովհաննես Մկրտիչն ընդունում էր, որ իր դերը Հիսուսի համար ճանապարհ պատրաստելն էր. նա ասաց. *«Նա պետք է մեծանա, բայց ես պետք է փոքրանամ»* (Հովհ. 3:30):

Հեզությունը. Աստվածաշունչը նշում է շատ մարդկանց, ովքեր հայտնի են իրենց հեզությամբ: Հիսուս Քրիստոսը հաճախ համարվում է Գերագույն օրինակը. Նա Իրեն նկարագրում էր որպես *«հեզ ու սրտով խոնարհ»* (Մատթ. 11:29):

Համբերությունը. Հոբը մեծ տառապանքներ կրեց, բայց հավատարիմ մնաց Աստծուն:

Սերը. *«Եվ այս բոլորի վրա հագեք սերը, որ կատարելության կապն է»* (Կող. 3:14):

Ո՞ւմ պետք է սիրենք. ամերիկացիների՞ն, հրեաների՞ն, պարսիկների՞ն, պաղեստինցիների՞ն… Մենք պետք է սիրենք բոլորին. դա մեր հրամանն է: Ուստի քանի որ վերջն այնքան մոտ է, եկե՛ք հագնենք այս առաքինությունները:

Հ. Գ.

Քրիստոնյաները և հարմարվողականությունը

Վերջերս՝ առավոտյան պաշտամունքի ժամանակ, տեղի ունեցած մի փոքրիկ միջադեպ ինձ ստիպեց մտածել: Երկրպագության ժամանակ մի հավատացյալ խնդրեց, որ տեղում նստած մնանք՝ հատուկ օրհներգի ժամանակ: Առաջին շարքում մի քանի հոգի չլսեցին նրա խնդրանքը և վեր կացան երգելու՝ տեղում նստած մնալու փոխարեն: Կարծում եմ, որ նրանք չգիտեին, որ բոլորը, ովքեր նստած էին իրենց հետևում, նստած մնացին: Ի վերջո նրանց հետևում գտնվող շարքը նույնպես որոշեց ոտքի կանգնել: Այնուհետև հաջորդ շարքը կանգնեց, և այսպես «մեքսիկական ալիքը» պտտվեց, մինչև բոլորը ոտքի կանգնեցին օրհներգի ժամանակ՝ չնայած տեղում նստած մնալու խնդրանքին: Համոզված եմ, որ նման բան տեղի է ունեցել նաև ձեր եկեղեցում:

Ինձ հետաքրքրեց այն, որ քանի դեռ միայն մեկ կամ երկուսն էին ոտքի կանգնել, ես ինձ վրա մեծ ճնշում չէի զգում կանգնելու համար:

Սակայն քանի որ կանգնած մարդկանց թիվը մեծանում էր, նրանց միանալու ճնշումը նույնպես մեծանում էր: Մենք այն քչերից էինք, ովքեր դեռ անում էին այն, ինչ մեզ խնդրել էին անել: Բայց եկավ մի պահ, երբ ճնշումն այնքան ուժեղացավ, որ բոլորին միանալը բացարձակապես անհրաժեշտ դարձավ: Ի վերջո ես հանձնվեցի և կանգնեցի: Եթե ինչ-որ մեկը հարցներ ինձ, թե ինչու եմ կանգնում, երբ ինձ հստակ խնդրել են մնալ տեղում, ես ստիպված կպատասխանեի, որ հիմարի տեսք կունենայի՝ լինելով միակ մարդը, ով որոշել է նստել, երբ մնացածը կանգնած են: Պարզ փաստն այն է, որ ես ուզում եմ ընդունված լինել, և ուրիշներից տարբերվելը ճանաչման հասնելու լավագույն միջոցը չէ: Ի վերջո «Ի՞նչ կմտածեն մարդիկ» հարցն ավելի կարևոր դարձավ, քան «Ինչպե՞ս ճիշտ վարվել» հարցը: Իհարկե, ես աղմուկ եմ բարձրացնում եկեղեցական ծառայության աննշան միջադեպի պատճառով, բայց դա ցույց է տալիս մի կարևոր փաստ, որ մեր կյանքում գոյություն ունեն ուժեր, որոնք ձևավորում են մեր կյանքն ու ընտրություններն այս աշխարհում:

Այստեղից բխում են երեք սկզբունքներ.

- Սխալը, որ քիչ մարդիկ են գործում, սխալ է թվում:
- Սխալը, որ շատ մարդիկ են գործում, ճիշտ է թվում:
- Սխալը, որ բավարար մարդիկ են գործում, ճիշտ է թվում և ստեղծում է նրանց միանալու և «նորմալ» լինելու գրեթե անդիմադրելի փափագ:

Ինչո՞ւ է դա այդպես: Այս սկզբունքների կիրառման հետևանքները հսկայական են: Ինչպե՞ս կարող ենք ազատվել այս ուժից, որը ստիպում է մեզ միանալ ամբոխին, նույնիսկ եթե գիտենք, որ նրանք սխալ են: Այս հարցի պատասխանը կբնութագրի մեզ՝ որպես քրիստոնյայի ամբողջ աշխարհում:

Մենք վախենում ենք տարբերվելուց, քանի որ ուզում ենք, որ աշխարհի մարդիկ ընդունեն և գնահատեն մեզ: Երբ փնտրում ենք մարդկանց գնահատանքը ու թույլ ենք տալիս, որ նրանք որոշեն մեր արժեքը, նրանց հսկայական իշխանություն ենք տալիս մեր նկատմամբ: Նրանք կգնահատեն և կընդունեն մեզ, եթե անենք այն, ինչ նրանք են անում: Եթե թույլ տանք նրանց, նրանք էլ մեր նկատմամբ կունենան

նույն ուժը, որը թմրավաճառն ունի իր կախյալ հաճախորդների նկատմամբ: Մենք կարող ենք կախված լինել ընդունված լինելու զգացումից և ամեն ինչ անել՝ դրան հասնելու համար: Եթե չգտնենք սիրո և ընդունման որևէ այլ հուսալի աղբյուր, ապա աշխարհի մարդիկ միշտ հնարավորություն կունենան վերահսկելու մեր վարքագիծը՝ տալով կամ զրկելով մեզ անհրաժեշտ արժեքից և ճանաչումից:

Քրիստոսը բարձրացրեց այս հարցը, երբ հրեաներին ասաց. *«Ինչպե՞ս կարող եք դուք հավատալ, որ իրարից փառք ստանում եք, բայց չեք փնտրում այն փառքը, որ միայն Աստծուց է գալիս»* (Հովհ. 5:44):

Որպեսզի ազատվենք ուրիշների՝ մեր նկատմամբ ունեցած այս իշխանությունից, պետք է մեր արժեքն ու ճանաչումը գտնենք Աստծո մեջ: Երբ զգանք, որ Աստված սիրում և գնահատում է մեզ, ապա այս աշխարհում մարդկանց կողմից ճանաչվելու մեր կարիքը կնվազի, մեր նկատմամբ նրանց իշխանությունը կթուլանա, քանի որ ավելի քիչ կունենանք այն բանի կարիքը, ինչ նրանք կարող են մեզ տալ: Մենք այլևս չենք վերահսկվի որպես կախվածություն ունեցողներ և կսկսենք փորձառել իրական որոշումներ կայացնելու ուրախությունը: Հրեաները կախվածություն ունեին միմյանց գովասանքից, ուստի նրանք երբեք չէին կարողանա փորձառել Քրիստոսի իրական կյանքը: Եթե նրանք գովասանք, հավանություն և արժեք փնտրեին Աստծուց, կազատվեին միմյանց իշխանությունից: Այդ ժամանակ կտեսնեին, թե իրականում ով էր Քրիստոսը, և կսկսեին ապրել իսկապես ազատ կյանքով, որը կտարբերվեր իրենց շրջապատող աշխարհի աղավաղված արժեքներից: Այսօր մենք ունենք այդ հնարավորությունը:

Ռեքս Տիրլավ

❊ ❊ ❊

Խոնարհություն է, երբ մարդիկ քեզ փառաբանում են և նվերներ են տալիս, սակայն դու այդ ամենը քեզ չես վերագրում, այլ Աստծուն փառք ես տալիս, Աստծուց գոհ ես մնում և ասում. «Սա Աստծո ողորմությունից է, և ոչ իմ արժանիքներից»:

Անանիա Նարեկացի

Ի՞նչ նշանակություն ունի հարությունն ինձ համար (2)

Հովհ. 20-րդ գլուխ

Նախորդ հոդվածում խոսեցինք Բեթանիայից մի ընտանիքի և Էմմաուսի ճանապարհին Տեր Հիսուսի երկու աշակերտների հետ հանդիպման մասին: Այս համարում խոսելու ենք Հովհաննեսի Ավետարանում նշված աշակերտների մասին:

Մարիամ Մագդաղենացին

Մենք մտովի վերադառնում ենք հարության առավոտ և դեպքերը դիտարկում այն աշակերտի աչքերով, որին Հիսուսը սիրում էր: Պատմությունը, որը նա պատմում է Հովհ. 20-րդ գլխում, այն մասին է, թե ինչպես Մարիամ Մագդաղենացին այցելեց գերեզման նախքան աշակերտների մոտ գնալը:

Ուշագրավ է Հովհաննեսի դեպքի նկարագրությունը: Ո՞րն է դրա նպատակը: Մտածե՛ք այն բոլոր մանրամասների մասին, որոնք նա չի նշում Մարիամ Մագդաղենացու մասին՝ յոթ դևերի դուրս բերումը, Հիսուսին հետևելը, շաբաթ օրը մայրամուտից հետո խնկեր գնելը, Տիրոջ մարմինն օծելու համար խնկեր ու յուղեր պատրաստելը, Հիսուսի գերեզման գնացող կանանց խմբում լինելը, բաց գերեզմանի մոտ հրեշտակներ տեսնելը... Հովհաննեսը բաց է թողնում այս ամենը, քանի որ ուզում է, որ մտածենք Մարիամի վրա հարության ազդեցության մասին:

Մարիամը չհասկացավ հրեշտակների պատգամն այն մասին, որ Տերը հարություն է առել: Նա ոչ թե հավատաց դրան, այլ շտապ մտածեց, որ ինչ-որ մեկը վերցրել է Նրա մարմինը: Ուստի նա գնաց Պետրոսի և Հովհաննեսի մոտ՝ հայտնելու, որ ինչ-որ մեկը վերցրել է Տիրոջ մարմինը: Սակայն չասաց, որ ինչ-որ մեկը վերցրել է մարմինը, այլ ինչ-որ մեկը վերցրել է Տիրոջը: Տերը մաքրել էր նրան յոթ դևերից, ուստի նա երբեք չէր կարող մտածել Նրա մասին որպես մարմնի: Նա իր Տերն էր:

Մարիամը վազեց՝ տեսնելու Պետրոսին և Հովհաննեսին: Ենթադրում ենք, որ նա հետ վազեց, քանի որ գերեզմանի մոտ էր մինչ Պետրոսի և Հովհաննեսի հեռանալը: Մենք կարող ենք պատկերացնել նրա վիշտը: Նա, ով այդքան շատ բան արեց իր համար, անհետացած էր: Նա անմխիթար էր: Որտե՞ղ էր Նա: Նա նայեց գերեզմանի մեջ և տեսավ երկու հրեշտակների, որոնք քնքշությամբ հարցրին, թե ինչու է լաց լինում: Նրա պատասխանը հաստատեց, որ նա Հիսուսի մասին միշտ մտածել է որպես իր Տիրոջ մասին. *«Տիրոջը գերեզմանից վերցրել են»*:

Ինչ-ինչ պատճառներով նա շրջվեց և տեսավ ինչ-որ Մեկին: Նա հարցրեց, թե ինչու է լաց լինում և ում է փնտրում: Շփոթված, կարծելով, թե պարտիզպանն է, ասաց Նրան. *«Տե՛ր, եթե դու ես վերցրել Նրան, ասա՛ ինձ, թե ուր ես դրել, որ ես վերցնեմ Նրան»* (Հովհ. 20:15): Տերն արտասանեց մեկ բառ՝ Մարիա՛մ: Նա անմիջապես հասկացավ, որ դա Տերն է, և որ Նա կենդանի է:

Ի՞նչ ազդեցություն ունեցավ հարությունը Մարիամ Մագդաղենացու վրա: Նրա տխրությունը փոխարինվեց ուրախության, և նա ուրախությամբ վերադարձավ Պետրոսի և Հովհաննեսի մոտ՝ վկայելու այն ճշմարտությունը, որ Տերը կենդանի է:

Պետրոսն ու Հովհաննեսը

Պետրոսն ու Հովհաննեսը վազեցին դեպի գերեզմանը: Նրա բոլոր գործողությունները հստակ ցույց են տալիս, թե հարությունը ինչ խոր ազդեցություն է ունեցել նրա վրա: Նույնիսկ մի աննշան մանրուքի շնորհիվ նա մեզ համոզում է, որ խոսում է այն բանի մասին, ինչ ինքը անձամբ է տեսել: Ո՞վ, եթե ոչ անմիջական ականատեսը կարող էր հիշել և նշել, որ վազելիս ինքը առաջ է անցել իր ընկերոջից: Հենց այդ չնչին դետալն է, որ հավելյալ վկայություն է դառնում Հովհաննեսի պատմության ճշմարտացիության օգտին:

Նախքան Պետրոսի ժամանելը Հովհաննեսն ուշադիր մտածում էր իր տեսածի մասին: Նա տեսավ, որ կտավներն իրենց տեղում են, իսկ վարշամակը, որով փաթաթված էր Նրա գլուխը, դրված է առանձին: Դա կարող է նշանակել միայն մեկ բան: Ոչ ոք մարմինը չէր վերցրել, ոչ էլ գողացել էր: Եթե ինչ-որ մեկը գողանար մարմինը, հավանաբար

կվերցներ նաև թաղման պարագաները: Եթե գողացողին հուղարկավորության պարագաները պետք չլինեին, ապա դրանք կգցեր հատակին: Բայց այս կտավները կոկիկ դրված էին իրենց տեղում, կարծես Տերն անհպում դուրս էր եկել դրանցից: Հովհաննեսը պատմում է, որ տեսավ ու հավատաց: Նա ավելացնում է՝ ասելով. *«Որովհետև նրանք դեռ Գիրքը չգիտեին, թե Նա պետք է մեռելներից հարություն առնի»*:

Ի՞նչ ազդեցություն ունեցավ հարությունը Հովհաննեսի վրա: Նա սկսեց ավելի խորը հավատալ և ավելի լավ հասկանալ սուրբգրությունը:

Աշակերտները

Հարության օրվա երեկոյան աշակերտները հավաքվել էին փակ սենյակում: Չնայած Հովհաննեսը հավատում էր, որ Հիսուսը հարություն է առել մեռելներից, և աշակերտները գիտեին, որ Տերը հայտնվել է Պետրոսին, նրանք՝ տղամարդիկ և կանայք, վախենում էին: Տերը մտավ փակ սենյակ և ասաց. *«Խաղաղությո՛ւն ձեզ»*: Երբ նրանց վախն անցավ, նրանք ուրախացան՝ տեսնելով Տիրոջը:

Ի՞նչ ազդեցություն ունեցավ հարությունը աշակերտների վրա: Ուրախություն՝ հուսահատության փոխարեն: Բայց Տերը հանձնարարություն տվեց աշակերտներին՝ ասելով, որ ինչպես Հայրն է ուղարկել Իրեն, այնպես էլ Ինքն է ուղարկում նրանց: Հարությունը նշանակում էր, որ աշակերտներն ունեին աշխատանք. նրանք պետք է լինեին Տիրոջ վկաները, ուր էլ որ գնային: Հարությունը ևս մի նշանակություն ունի: Շուտով նրանք չեն լինի ահաբեկված մարդիկ, ովքեր թաքնվում են հրեական իշխանություններից, այլ Հոգեգալստյան օրը համարձակորեն կհայտարարեն հարության լուրը, որ *«Ասուված այն նո՛յն Հիսուսին, ում դուք խաչեցիք, թե՛ Տեր դարձրեց, թե՛ Օծյալ»* (Գործք 2:36):

Ի՞նչ նշանակություն ուներ հարությունն աշակերտների համար: Դա նրանց ուրախություն պատճառեց և տվեց այն քաջությունը, որն անհրաժեշտ էր բարի լուրն անվախորեն հայտարարելու համար նախ հրեաներին, շուտով նաև բոլորին:

Թովմասը

Հովհաննեսը նշում է ևս մեկին՝ Թովմասին: Ի՞նչ նշանակություն ունեցավ հարությունը նրա համար: Թովմասը մյուս աշակերտների հետ չէր Տիրոջ հարության օրը: Այսպիսով, շաբաթվա ինչ-որ պահի նրանք ասացին նրան, որ տեսել են Տիրոջը: Նա չհավատաց՝ ասելով, որ չի հավատա, եթե չտեսնի ոչ միայն մեխերի հետքերը, այլև մատը չդնի այնտեղ, որտեղ մեխերն էին:

Հաջորդ կիրակի Թովմասը մյուս աշակերտների հետ էր: Տերը կրկին մտավ փակ սենյակ և ողջունեց աշակերտներին. *«Խաղաղությո՛ւն ձեզ»*: Նա դիմեց Թովմասին:

Աշակերտներից ոչ մեկն այդ շաբաթվա ընթացքում չտեսավ Տիրոջը, ուստի նրանցից ոչ մեկը չէր կարող զգուշացնել նրան, թե ինչ ընդունելություն կարող է ակնկալել Թովմաս առաքյալից: Բայց Նա գիտեր. *«Մատդ բեր այստեղ և ահա՝ տե՛ս Իմ ձեռքերը. և ձեռքդ երկարի՛ր և իմ կողի մեջ մտցրո՛ւ»: Նա ասաց. «Անհավատ մի՛ լինի, այլ՝ հավատացյալ»* (Հովհ. 20:27):

Թովմասի պատասխանն անմիջապես լսվեց. *«Իմ Տե՛ր և իմ Աստվա՛ծ»*: Հարության Ճշմարտությունը նրան կասկածողից վերածեց ուժեղ հավատացյալի: Նա իր մյուս աշակերտների հետ միասին համարձակորեն հայտարարեց, որ փրկությունը Տեր Հիսուս Քրիստոսի մեջ է: Եկեղեցական ավանդությունն ասում է, որ նա գնաց Հնդկաստանի հարավ, Ավետարանը քարոզեց և եկեղեցիներ հիմնադրեց:

Մեր արձագանքը

Ինչպե՞ս է ազդում հարության մասին ճշմարտությունը մեզ վրա: Արդյո՞ք այն փոխել է մեզ:

- Մենք, որ անհավատ էինք, հիմա հավատո՞ւմ ենք:
- Մենք, որ տրտմեցինք, հիմա ուրախանո՞ւմ ենք Տիրոջ համար:
- Մենք, որ վախենում էինք, հիմա համարձա՞կ ենք հանուն Նրա:
- Մենք՝ աշակերտներս, նաև երկրպագունե՞ր ենք:
- Մենք, որ գիտենք հարության նշանակությունը, արդյո՞ք ճշմարիտ և անվախ հռչակում ենք այս լուրը:

Դոն Սթորմը

Նա սովորեցրեց նրանց (3)

Մատթեոս 5-րդ գլուխ

Մաս 3. Օրենքի կատարումը

«Դուք եք աշխարհի լույսը»:

Կյանքով, հույսով և մեծ հեղինակությամբ ու սիրով արտասանված խոսքերը լսելուց հետո աշակերտներն ու հավաքված բազմությունը մտածեցին, որ այս վարդապետությունն այնքան նոր ու տարբեր է այն ամենից, ինչ գիտեին: Նրանք գուցե մտածեցին, որ Օրենքն ու Մարգարեները պետք է մի կողմ դրվեն: Բայց այդ միտքը շուտով փարատվեց:

«Մի՛ կարծեք, թե Ես եկա Օրենքը կամ Մարգարեներն ավերելու: Ավերելու չեկա, այլ՝ կատարելու: Ճշմարիտ եմ ասում ձեզ, մինչև երկինքն ու երկիրն անցնեն, Օրենքից մեկ կետ կամ մեկ նշանագիր չի անցնի՝ մինչև բոլորը կատարվի»:

Տեր Հիսուսը որքա՜ն բարձր էր դասում Սուրբգրությունը: Աստվածաշնչում ոչինչ, նույնիսկ ամենափոքր նշանն աննպատակ չէ: Այս ամենը ճշմարիտ է և պետք է իրականանար:

Հիսուսի ուսմունքն այնքան տարբեր էր Նրա աշակերտների սովորած Օրենքից և Մարգարեներից, ուստի ինչպե՞ս կարող էր Նա լինել Օրենքի և Մարգարեության կատարողը: Ինչպե՞ս կարող էին նրանք հաշտեցնել այս տարբերությունը:

Պատասխանը շուտով պարզ դարձավ: Նրանք այնքան մակերեսորեն էին հասկացել Աստծո Խոսքը, այնքան կախված էին միայն արտաքին դրսևորումներից, որ բաց էին թողել դրա մեջ պարունակվող ամբողջական իմաստն ու նպատակը: Նրանք սովորել էին ավանդույթից, ոչ թե Աստծուց:

Իրականում Սուրբգրությունը պարունակում էր այնքան շատ խորհուրդներ, որ ոչ ոք լիովին չէր հասկանում դրանք, և Դա այն էր, Ինչ Տեր Հիսուսը եկավ կատարելու: Միայն Նա գիտեր, որ յուրաքանչյուր զոհաբերություն, որն Իսրայելին պատվիրված էր անել, իրականում

մարգարեական խորհրդապատկերն էր այն միակ կատարյալ զոհաբերության, որը Նա անելու էր, երբ Ինքն Իրեն զոհաբերեր որպես *«Աստծո Գառը»* (Հովհ. 1:29):

Միայն Տեր Հիսուսը գիտեր, որ Իր մահվան և հարության շնորհիվ Իսրայելի կրոնական ամբողջ համակարգը՝ տաճարը, քահանայությունը, տոնական օրերն իրականանալու են Իր մեջ: Բայց այդ ամենը դեռ պետք է բացահայտվեր: Իսկ մինչ այդ աշակերտները պետք է հասկանային, որ իրենք Օրենքը չեն հասկանում:

«Որովհետև ասում եմ ձեզ, եթե ձեր արդարությունը չգերազանցի փարիսեցիների և դպիրների արդարությանը, երբեք չեք մտնի երկնքի թագավորությունը»:

Դպիրների և փարիսեցիների ուսմունքից և օրինակից մարդկանց սովորածը տեղ չգտավ Աստծո գործի և նպատակների իրագործման մեջ: Դա Աստծո ճանապարհը չէր, ոչ էլ այն ճանապարհը, որով պետք է ընթանային Նրա աշակերտները:

Տերն այստեղ չի խոսում մեզ տրված արդարության մասին, որը ստանում ենք հավատքով: Ո՛չ. Նա խոսում էր արդար ապրելակերպի, սովորությունների, բարքերի և Իր աշակերտների խոսակցության մասին: Նրանց արդարությունը պետք է գերազանցի դպիրների և փարիսեցիների կեղծ արդարությանը: Նրա աշակերտները երբեք չպետք է նմանվեին *«…սպիտակեցրած գերեզմանների, որ դրսից գեղեցիկ են երևում, բայց ներսից լցված են մեռելների ոսկորներով և ամեն տեսակ ապականությամբ»* (Մատթ. 23:27):

Աստծո օրենքի նրանց ըմբռնումը պետք է ամբողջովին փոխվեր, և Տերը սկսեց սովորեցնել, որ օրենքը վերաբերում է ոչ միայն նրանց արածին, այլև հենց նրանց անձերին: Մարդը նայում է արտաքինին, բայց Տերը՝ սրտին (Ա Թագ. 16:7): Սա դաս է, որը բոլորս պետք է սովորենք:

Նեյլ Բուքման

❊ ❊ ❊

Արտասովոր ամուսնություն

Հռոմ. 12-րդ գլուխ

Հարսանիքը շատ լավ անցավ. մարդիկ շատ բարեհամբույր էին և միմյանց շռայլորեն ողջունում ու շնորհավորում էին: Մեծ տորթից բոլորին էլ հասավ, բացեցին բոլոր գեղեցիկ ու ճոխ նվերները և տուն տարան: Շուտով հարսի և փեսայի լիմուզինը շարժվեց դեպի օդանավակայան. նորապսակները պետք է մեկնեին՝ իրենց մեղրամիսն անցկացնելու:

Հանկարծ հարսնացուն շրջվեց ամուսնու կողմն ու ասաց.

- Քրի՛ս, ուզում եմ, որ ինձ տուն տանես:

Ամուսինը շատ զարմացավ, բայց կարողացավ պատասխանել.

- Մեր տունը պատրաստ կլինի երեք շաբաթ հետո, երբ վերադարձած կլինենք մեղրամսից:

- Ո՛չ, ես նկատի չունեմ այն տունը, որ դու ես ինձ համար կառուցում: Ես ուզում եմ վերադառնալ իմ հին տուն, - ասաց հարսնացուն:

Քրիսը ցնցված էր. աղջիկը լուրջ էր խոսում: Նա շարունակեց.

- Քրի՛ս, ես ուրախ եմ, որ քեզ հետ եմ ամուսնանում, այժմ մենք իրար ենք պատկանում, ես կարող եմ քո ազգանունը կրել, բայց ուզում եմ իմ հին տունը գնալ: Այժմ, երբ արդեն ամուսնացած ենք, ժամանակ առ ժամանակ իրար կտեսնենք, բայց մշտապես չենք կարող իրար հետ մնալ: Ես ուզում եմ իմ տուն գնալ, ընկերներիս մոտ լինել, իմ առօրյան ու կյանքն ունենալ: Իհարկե՛, սիրում եմ քեզ, դու իմ ամուսինն ես, հավիտյան քոնը կլինեմ, բայց չեմ ուզում, որ խառնվես իմ կյանքին: Ես ուզում եմ ապրել այնպես, ինչպես ինձ է հաճելի: Երբ հիվանդ լինեմ կամ խնդիրներ ունենամ, կզանգեմ ու կխնդրեմ, որ գաս, օգնես ինձ: Ամեն դեպքում դու իմ ամուսինն ես: Շնորհակալությո՛ւն, որ ինձ սիրում ես և ինձ ընտրեցիր որպես կին, բայց ես իմ կյանքն ունեմ և կանեմ այն, ինչ ես եմ ուզում:

Մի՞թե սա ամուսնություն է: Իհարկե, ոչ: Սարսափելի կատակ է և ուխտի հեգնանք:

Վերստին ծնվելն ամուսնության նման է. շատերն են իրենց քրիստոնյա անվանում, բայց իրենց վարքով ու տեսակետներով չեն տարբերվում այս հարսնացուից: Իրենց ապրած կյանքով նրանք ասում են. «Տե՛ր, ես քեզ ընդունել եմ որպես իմ Փրկիչ, շնորհակալ եմ, որ փրկեցիր ինձ, բայց հիմա ինձ հանգի՛ստ թող, ես գնում եմ իմ ընկերների մոտ և կապրեմ այնպես, ինչպես նախկինում եմ ապրել: Եթե քո օգնության կարիքն ունենամ, կդիմեմ քեզ: Ի վերջո դու իմ Փրկիչն ես, այնպես չէ՞: Բայց մի՛ պահանջիր, որ ապրեմ քո ուզածով. դա արդեն չափազանց շատ է: Իհարկե՛, երբ մահանամ, ուզում եմ գալ այն տունը, որն ինձ համար ես կառուցում, բայց մինչ այդ թող ապրեմ այնպես, ինչպես ես եմ ուզում»: Այսպիսի վերաբերմունք ունեցող մարդն արդյոք Քրիստոսի՞նն է, և մի՞թե նա ամբողջությամբ է նվիրվել Քրիստոսին: Հռոմ. 7-ում կարդում ենք այն մասին, թե ինչ է լինում, երբ վերստին ծնված քրիստոնյա ենք դառնում: Ամուսնության համանմանությամբ է նկարագրվում Քրիստոսի հետ մեր միությունը. արդյո՞ք դու նրանն ես, իսկ նա՝ քոնը:

«Արդ աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, Աստծո ողորմությունով, որ ձեր մարմիններն ընծայեք որպես կենդանի զոհաբերություն, սուրբ և Աստծո ընդունելի, որ ձեր բանավոր պաշտոնն է» (Հռոմ. 12:1):

Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

❊ ❊ ❊

«Իսկ եթե Նրա Հոգին, որ հարություն տվեց Քրիստոսին, ձեր մեջ է բնակվում, ապա Քրիստոսին մեռելներից հարություն տվողը ձեր մահկանացու մարմիններն էլ կկենդանացնի Իր Հոգով, որ բնակվում է ձեր մեջ: Ուրեմն, եղբայրնե՛ր, մենք պարտական չենք մարմնին, ըստ մարմնի ապրելուն»:

*Հռոմ. 8:**11-12***

Լուրեր Վրաստանից

«Այն ժամանակ Իր աշակերտներին ասաց. «Իրոք, հունձն առատ է, բայց մշակներ՝ քիչ: Աղաչեցե՛ք հնձի Տիրոջը, որ մշակներ ուղարկի Իր հնձի համար»» (Մատթ. 9:37-38):

Այս տարվա մարտին Հայաստան կատարած իմ այցը մեծ քաջալերանք ու օրհնություն եղավ ինձ համար: Մեր աշխատակիցները շարունակում են մասնակցել ծառայության տարբեր ոլորտներում, այդ թվում՝ կարիքավոր ընտանիքների աջակցությանը, Աստվածաշնչի կանոնավոր ուսումնասիրությանն ու մանկական ծառայությանը:

Տերն այս տարի նույնպես մեր սրտին դրեց Վրաստան այցելել: Մարտունը, Աշոտը և Վարդանը թիմի մի մասն էին, և մենք պատիվ ունեցանք հանգստյան օրերն անցկացնել «Գթություն» մկրտական եկեղեցու առաջնորդների հետ:

Մեր աչքերը բաց են հայկական Սփյուռքի կարիքների վրա՝ թե՛ հոգևոր և թե՛ նյութական: Անցյալ տարի այցելեցինք հեռավոր Սամշիլվիդե գյուղ, որտեղ բնակիչների 99 %-ը հայ են: Վիրահայ մեր եղբայրները շատ էին փափագում, որ այցելենք ևս մի գյուղ՝ գրեթե մոռացված հայկական Սաբատլոն՝ հեռավոր Կախեթի շրջանում, որը գտնվում է Ադրբեջանի հետ սահմանին:

Սաբատլոն Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիից մոտ 200 կմ հեռավորության վրա է: Մկրտական եկեղեցու առաջնորդները մեզ պատմեցին այս փոքրիկ համայնքի պատմությունը, որը լքել է Արցախն ավելի քան 100 տարի առաջ և հատել Արաքս գետը, որը բաժանում է Ադրբեջանն ու Վրաստանը, և Կովկասյան տարածաշրջանի ամենաերկար գետերից մեկն է, քանի որ ընդգրկում է Թուրքիան, Հայաստանը, Ադրբեջանը և Իրանը: Տեղահանված հայկական այս խումբը մինչ օրս ապրում է այդ տարածաշրջանում՝ իր համեստ կացարանում: Միայն Աստծո շնորհով նրանք դեռ այնտեղ են, չնայած նրանց թիվը նվազում է:

Շաբաթ օրը եկեղեցու առաջնորդների հետ բավականին ոլորապտույտ ճանապարհով գնացինք հեռավոր Սաբատլո, ծանոթացանք

համայնքի հետ և այցելեցինք որոշ մարդկանց, ովքեր բժշկական օգնության կարիք ունեին: Ավելի ուշ այնտեղի ծառայության փոքրիկ սրահում հանդիպեցինք համայնքին, և Աշոտը քարոզեց ու խրախուսեց ժողովրդին:

Գևորգ անունով մի երիտասարդ ակտիվորեն օգնում է փոքր համայնքին, և եկեղեցին քննարկում է նրա թեկնածությունը ձեռնադրության համար:

Հեռավորության և նյութատեխնիկական խնդիրների պատճառով շաբաթական հանդիպումները չեն անցկացվում:

Մեր Տերը հստակ պատվիրում է մեզ, որ սկսենք աղոթքով. *«Աղաչեցե՛ք հնձի Տիրոջը, որ մշակներ ուղարկի Իր հնձի համար»:* Տերը մեզ հպվեց ACM-ում՝ ոչ միայն աղոթելու նրանց համար, այլև այցելելու և մասնակցելու նրանց հոգևոր և նյութական կարիքներին:

ACM-ն իր հիմնադրումից ի վեր աջակցում է ընտանիքներին, և Վրաստանի հետ կապված մեր փափագն է տեղական եկեղեցու օգնությամբ աջակցել այս երկու գյուղերին:

Աստծո շնորհքով՝ 2025 թվականի ապրիլից սկսած՝ վեց ամիս է՝ օգնում ենք նրանց: Աղոթքների ու զոհաբերությունների հետ մեկտեղ փափագում ենք, որ մի հոգևոր մշակ առաջնորդի այնտեղի ժողովրդին՝ Տիրոջ հետ քայլելու և հավատարմաբար քարոզելու Ավետարանի բարի լուրը:

Այն փաստը, որ *«հունձն առատ է»*, ինչպես ասել է մեր Տերը, իրականություն է նույնիսկ այսօր: Մենք հիշում ենք մշակների համար աղոթելու անհրաժեշտության մասին և գիտենք, թե որքան կարևոր են «մշակները»: Մենք՝ որպես կազմակերպություն և եկեղեցու ճյուղ, շարունակելու ենք փնտրել մեր Տիրոջ դեմքը:

Շարունակե՛ք աղոթել ACM-ի թիմի համար, քանի որ սեպտեմբերին նախատեսվում է ևս մեկ այցելություն Վրաստան նախքան միսիոնարկան խմբի Հայաստան այցելելը:

Դոկտ.՝ Դանիել Ջեյմս